«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 138-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 5.1-ին կետով.

«5.1) ծնողական ժամը.»։

Հոդված 2. Օրենսգրքի 142-րդ հոդվածում «ռեժիմը» բառը փոխարինել «գրաֆիկը» բառով։

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել նոր 142.1-ին հոդվածով.

«**Հոդված 142.1. Ծնողական ժամ**

1. Խնամքին մինչև տասներկու տարեկան երեխա ունեցող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի

օգտվելու ծնողական ժամից՝ երեխային նախադպրոցական կամ հանրակրթական հաստատություն ուղեկցելու կամ հաստատությունից վերցնելու նպատակով։

2. Ծնողական ժամը տրամադրվում է՝

1) մինչև երկու երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ օրական առավելագույնը 30 րոպե?

2) երեք և ավելի երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ օրական առավելագույնը մեկ ժամ?

3. Ծնողական ժամը տրամադրվում է աշխատողի գրավոր դիմումի հիման վրա։»։

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր 142.2-րդ հոդվածով.

«Հոդված 142.2. Ճկուն աշխատանքային գրաֆիկ

1. Աշխատողի և գործատուի գրավոր համաձայնությամբ կարող է սահմանվել ճկուն աշխատանքային գրաֆիկ, որի դեպքում աշխատանքային օրվա (հերթափոխի) սկիզբը և ավարտը որոշվում է կողմերի համաձայնությամբ։

2. Ճկուն աշխատանքային գրաֆիկ սահմանվելու պարագայում անհրաժեշտ է պահպանել աշխատաժամանակի շաբաթական տևողությունը, ինչպես նաև սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի, 152-րդ, 154-րդ և 155-րդ հոդվածների կարգավորումները։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։